««Հանրային ռադիոյի հիմնադրման 100-ամյակի» միջոցառումների իրականացում (փուլ 2)» դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
Հապավումը (եթե առկա է)	
Ծրագրի անվանումը	««Հանրային ռադիոյի հիմնադրման 100-ամյակի» միջոցառումների իրականացում (փուլ 2)»
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	06.07.2026թ–03.11.2026թ
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	ՀՀ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Գործադիր տնօրեն Ա Քոլոյան, Հեռ: +37410570970 Էլ փոստ: info@armradio.am
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Գործադիր տնօրեն Ա Քոլոյան Հեռ: +37410570970 Էլ փոստ: info@armradio.am
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ. փոստ)	ՀՀ Ք.Երևան, Ալեք Մանուկյան 5 Հեռ: +37410570970 էլ փոստ: info@armradio.am
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	68,428,400 ՀՀ դրամ

Համառոտագիր

Հայկական ռադիոյի 100-ամյակը պարզապես գերատեսչական հոբելյան չէ, այն Հայաստանի երրորդ հանրապետության մշակութային, քաղաքական և հասարակական կյանքի մեկդարյա տարեգրության արժևորումն է: 1926 թվականից ի վեր ռադիոն եղել է Հայաստանի «ձայնը»՝ կամուրջ հանդիսանալով հայրենիքի և սփյուռքի միջև, պահպանելով մեր լեզվի մաքրությունը և ձևավորելով հանրային կարծիք: Այս ծրագրի կարևորությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս վերագնահատել այն հսկայական ձայնադարանը և մշակութային ժառանգությունը, որը կուտակվել է մեկ դար շարունակ:

Հոբելյանական միջոցառումների շարքը նպատակ ունի ոչ միայն հայացք նետել անցյալին, այլև սահմանել ռադիոյի դերը թվային դարաշրջանում: Այսօր, երբ տեղեկատվական հոսքերն անվերահսկելի են, Հանրային ռադիոն մնում է որպես հավաստիության և որակյալ բովանդակության բացառիկ հարթակ: 100-ամյակի նշումը կխթանի ազգային ինքնության ամրապնդմանը, կվերահմաստավորի ռադիոյի նշանակությունը և նոր շունչ կհաղորդի ռադիոյի ու լսարանի անմիջական կապին: Սա պետական նշանակության իրադարձություն է, որն ընդգծում է Հայաստանի հավատարմությունը իր մշակութային արժեքներին և պատրաստակամությունը՝ քայլելու տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ:

Ծրագրի նկարագրությունը

Հայկական ռադիոյի 100-ամյակի հոբելյանական տարվա 16 հիմնական միջոցառումների շարքում առանցքային նշանակություն ունեն երևանյան երկու ամենամասշտաբային և տպավորիչ իրադարձությունները: Մայրաքաղաքի մշակութային զարկերակը հանդիսացող երկու խորհրդանշական վայրերում՝ Կասկադ համալիրի բացօթյա հարթակում և Օպերայի ու բալետի ազգային ակադեմիական թատրոնում, Հանրային ռադիոն կներկայանա իր ողջ ստեղծագործական ու երաժշտական ներուժով: Այս երկու մեծ միջոցառումները կդառնան անցյալի մեծարման և դեպի նոր հարյուրամյակի խորհրդանիշը:

Այս բացօթյա մեծ համերգը հայկական ռադիոյի հարյուրամյա ժառանգությունը միախառնելու է արդի հայկական երաժշտական ալիքին: Մայրաքաղաքի սրտում բաց երկնքի տակ կայանալիք տոնական երեկոյի ընթացքում հատուկ ելույթներով հանդես կգան հայաստանյան ժամանակակից ամենասիրված ու հայտնի խմբերը՝ իրենց հետ բերելով նոր էներգիա, թարմ հնչողություն և մեծ աշխուժություն:

Միջոցառումն ամբողջությամբ բաց է հանրության համար՝ ապահովելով անմիջական կապ, կենդանի հաղորդակցություն և անկրկնելի տրամադրություն երևանցիների ու մայրաքաղաքի հյուրերի համար:

2026 թվականի հոբելյանական տարին կամփոփվի տարվա ամենասպասված և հանդիսավոր մշակութային իրադարձությամբ՝ հոբելյանական շքեղ Գալա-համերգով Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Այս բացառիկ երեկոն կդառնա 100-ամյա հարուստ պատմության, մշակութային հսկայական ժառանգության և մնայուն արժեքների սինթեզը: Մեկ բեմում կհամախմբվեն Հանրային ռադիոյի բոլոր սեփական երաժշտական կոլեկտիվները, հանրապետության լավագույն ձայներն ու հրավիրյալ աստղերը: Համերգային ծրագիրը կլինի ռադիոյի անցած ճանապարհի յուրօրինակ երաժշտական վավերագրությունը՝ ոսկե ֆոնդի անմահ գործերից մինչև նորօրյա բացառիկ կատարումներ:Որպես տարվա գլխավոր մեդիա-մշակութային իրադարձություն՝ Գալա-համերգին ներկա կլինեն բարձրաստիճան հյուրեր, մշակույթի գործիչներ և միջազգային գործընկերներ, այդ թվում՝ EBU-ի (Եվրոպական հեռարձակողների միության) ներկայացուցիչներ:

Հոբելյանական Գալա-համերգը Հայկական ռադիոյի 100-ամյա պատմության մեծարման, երկարամյա աշխատանքի արժևորման և դեպի հաջորդ հարյուրամյակ հաստատուն քայլի խորհրդանիշն է:

Կազմակերպության փորձառությունը

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ն ունի մասշտաբային միջոցառումների պլանավորման, կազմակերպման և տեխնիկական սպասարկման բազմամյա փորձ: Մեր փորձառությունը ներառում է.

1. Մասշտաբային համերգային և հոբելյանական միջոցառումների կազմակերպում Վերջին տարիներին Հանրային ռադիոն, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Հանրային հեռուստաընկերության հետ համագործակցությամբ, Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում և «Արամ Խաչատրյան» համերգասրահում իրականացրել է մի շարք խոշորածավալ նախագծեր, այդ թվում՝

- ՀՀ ժողովրդական արտիստների հոբելյանական հանդիսություններ. Երվանդ Երզնկյանի 75-ամյակի, Ռուբեն Մաթևոսյանի 80-ամյակի, Մարտին Վարդազարյանի 85-ամյակի և Ռաիսա Մկրտչյանի 80-ամյակի հանդիսավոր երեկոների ամբողջական կազմակերպում և իրականացում:
- Համազգային նշանակության հոբելյաններ. Հովհաննես Բաղալյանի 100-ամյակին նվիրված «Ես իմ անուշ Հայաստանի» հոբելյանական համերգի և «Կոմիտաս 150. հետգրություն» նորարարական համերգ-ռադիոհաղորդման պրոդյուսինգը:
- Հոբելյանական միջոցառումներ. Հանրային ռադիոյի 95-ամյակի մասշտաբային միջոցառումների շարքը:

2. Երաժշտական արտադրություն և անթոլոգիաների թողարկում. Ընկերությունն ունի ձայնագրման և հրատարակչական բարդ նախագծերի կառավարման փորձ: Նշանակալի ձեռքբերում է մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի 100-ամյակի կապակցությամբ թողարկված բացառիկ երաժշտական անթոլոգիան (8 սկավառակ, 10 ժամ տևողությամբ երաժշտական ժառանգություն), որն իր ծավալով աննախադեպ է հայկական շուկայում:

3. Մշակութային միավորների և ռեսուրսների կառավարում. Հանրային ռադիոյի կազմում գործում են 4 պրոֆեսիոնալ երաժշտական կոլեկտիվներ (այդ թվում՝ Էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը, Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլը, «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը և Արևիկ մանկապատանեկան անսամբլը), ինչը թույլ է տալիս ինքնուրույն ապահովել միջոցառումների գեղարվեստական բարձր որակը և բովանդակությունը:

Հանրային ռադիոյի կազմակերպչական թիմը բաղկացած է փորձառու պրոդյուսերներից, մենեջերներից և տեխնիկական մասնագետներից, ովքեր ապահովում են միջոցառումների կառավարումը՝ բյուջետավորումից և լոգիստիկայից մինչև վերջնական արտադրություն:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

*1. **Ծրագրի նպատակը***

Ծրագրի նպատակն է բարձր մակարդակով և հավուր պատշաճի նշել Հայկական ռադիոյի 100-ամյա հոբելյանը՝ վերաիմաստավորելով ռադիոյի դերը որպես ազգային ռազմավարական արժեք, արդիականացնելով դրա ընկալումը երիտասարդության շրջանում և ամրապնդելով միջազգային մեդիա-գործակցությունը:

*2. **Ծրագրի խնդիրները***

1. Հանրային հաղորդակցություն և վիզուալ ներկայություն Երևանի սրտում

Մշակել և երկու համերգային հարթակներում կիրառել հոբելյանական տարվա միասնական տեսողական ինքնությունը (branding): Կասկադի դինամիկ բացօթյա միջավայրի և Օպերային թատրոնի ակադեմիական բեմի միջոցով իրականացնել լայնածավալ մեդիա-արշավ, որը տեսանելի և ընկալելի կդարձնի ռադիոյի պատմական ու ժամանակակից դերը հանրության լայն շերտերի համար:

2. Մշակութային ձևաչափերի բազմազանություն և լսարանի ընդլայնում

Ապահովել երաժշտական ու մշակութային բովանդակության լիարժեք հասանելիություն տարբեր նախասիրություններ ունեցող լսարանների համար: Կասկադի հարթակում ապակենտրոնացնել դասական պատկերացումները՝ ներգրավելով ժամանակակից հայտնի խմբերին, իսկ Օպերային թատրոնում հանդիսավորությամբ մատուցել ռադիոյի ակադեմիական և ժողովրդական ստեղծագործական ողջ ներուժը:

3. Սերունդների երկխոսություն և երիտասարդական լսարանի ներգրավում

Կասկադի բացօթյա համերգի միջոցով ստեղծել կապող կամուրջ Ռադիոտան ավանդական կոլեկտիվների և այսօրվա սերնդի ամենաթրենդային երաժշտական խմբերի միջև: Սա կխթանի երիտասարդների հետաքրքրությունը Հանրային ռադիոյի հանդեպ՝ արդիականացնելով 100-ամյա մեդիայի իմիջը նոր սերնդի աչքերում:

4. Բովանդակային ժառանգության մատուցում և հանդիսավոր արժևորում

Հոբելյանական գալա-համերգի շրջանակներում բեմականորեն փաստագրել և ներկայացնել ռադիոյի 100-ամյա ուղին՝ ոսկե ֆոնդի նմուշների և մնայուն մուլտիմեդիա արժեքների սինթեզով: Այս բարձրակարգ միջոցառմամբ տալ հարյուրամյա գործունեության արժանի գնահատականը թե՛ ներքին, և թե՛ միջազգային հարթակներում (EBU գործընկերներ, հրավիրյալ հյուրեր):

---

3. Ակնկալվող արդյունքներ

- Իրազեկվածության բարձրացում. Հանրային ռադիոյի հոբելյանական նախագծերի և թվային հարթակների տեսանելիության և հանրային արձագանքի զգալի աճ (հիմնված սոցցանցերի ներգրավվածության և մեդիա-մոնիտորինգի վրա):
- Զանգվածային մասնակցային միջավայր և մեդիա-ծածկույթ. Կասկադ համալիրի բացօթյա համերգի շնորհիվ ապահովել հազարավոր քաղաքացիների և մայրաքաղաքի հյուրերի անմիջական (ֆիզիկական) մասնակցությունը: Զուգահեռաբար, երկու համերգների ուղիղ հեռարձակումների և թվային մեդիա-արշավների միջոցով ներգրավել հազարավոր առցանց հետևորդների ու ռադիոլսողների:
- Միջազգային հարթակներում տեսանելիության բարձրացում. Օպերային թատրոնի հոբելյանական գալա-համերգի բարձրակարգ երաժշտական-մուլտիմեդիա բովանդակությունը պատշաճ կերպով ներկայացնել EBU-ի (Եվրոպական հեռարձակողների միության) և միջազգային այլ գործընկերների հարթակներում՝ ամրապնդելով հայկական ռադիոմշակույթի իմիջն արտերկրում:
- Սերունդների կապի և մշակութային ներկայության ամրապնդում. Կասկադում ժամանակակից հայտնի խմբերի և Ռադիոյի ավանդական կոլեկտիվների համատեղ ելույթների շնորհիվ ստեղծել նոր

մշակութային սինթեզ, որը կդառնա տարվա ամենախոսվող երաժշտական իրադարձություններից մեկը՝ ապահովելով ռադիոյի հոբելյանական բրենդինգի լայն հանրային ճանաչելիությունը:

- Մնայուն պատմական և համերգային արտադրանք. Երկու մեծ իրադարձությունների արդյունքում ձևավորել բացառիկ մեդիա-արխիվ (բարձրորակ համերգային տեսագրություններ, կենդանի կատարումների ձայնագրություններ), որոնք կհարստացնեն Հանրային ռադիոյի ֆոնդը: Գալա-համերգի ընթացքում հանրությանը և պատվավոր հյուրերին հանդիսավորությամբ ներկայացնել տարվա հիմնական մնայուն արժեքները՝ հոբելյանական նամականիշը, թողարկված բրոնզածույլ հուշամեդալը և 100-ամյակի վավերագրական ֆիլմի առանցքային դրվագները:

Գործողություններ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու
Միջոցառում 1	Բացօթյա համերգ Կասկադ համալիրում	
1.1	Համերգային ծրագրի և սցենարի կազմում և հաստատում	Շ. Վարդանյան, Մ. Խաչատրյան
1.2	Կատարողական անձնակազմի ընտրություն	Շ. Վարդանյան
1.3	Համերգային տեխնիկայի նախագծում	Տ. Կուզիկյան
1.4	Համերգային տեխնիկայի վարձակալում (մրցույթային ընթացակարգով)	Տ. Կուզիկյան, Հ. Վալադյան
1.5	Տեսաշարերի և հոլովակների պատրաստում	Է. Ամիրխանյան
1.6	Համերգի անցկացման վայրի և ժամի վերաբերյալ տեղեկատվության սփռում	Է. Ամիրխանյան
1.7	Համերգի իրականացում	Շ. Վարդանյան
Միջոցառում 2	Հոբելյանական գալա–համերգ	
2.1	Համերգային ծրագրի սինոփսիսի կազմում	Հ. Ղասաբյան
2.2	Համերգային ստեղծագործական անձնակազմի ընտրություն	Հ. Ղասաբյան
2.3	Համերգային ծրագրի և սցենարի կազմում և հաստատում	Հ. Ղասաբյան, Շ Վարդանյան
2.4	Կատարողական անձնակազմի ընտրություն	Հ. Ղասաբյան
2.5	Համերգային տեխնիկայի նախագծում	Հ. Ղասաբյան
2.6	Համերգային տեխնիկայի վարձակալում (մրցույթային ընթացակարգով)	Հ. Ղասաբյան, Հ. Վալադյան
2.7	Հայկական ռադիոյի 100-ամյա գործունեության պատմությանը վերաբերող տեսաշարերի և հոլովակների պատրաստում	Է. Ամիրխանյան
2.8	Համերգի իրականացում	Հ. Ղասաբյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
Ծրագիր ««Հանրային ռադիոյի հիմնադրման 100-ամյակի» միջոցառումների իրականացում (փուլ 2)»
Ժամանակահատված 06.07.2026թ–03.11.2026թ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Միջոցառում 1	Բացօթյա համերգ Կասկադ համալիրում													
1.1	Համերգային ծրագրի և սցենարի կազմում և հաստատում	Շ. Վարդանյան, Մ. Խաչատրյան												
1.2	Կատարողական անձնակազմի ընտրություն	Շ. Վարդանյան												
1.3	Համերգային տեխնիկայի նախագծում	Տ. Կուզիկյան												
1.4	Համերգային տեխնիկայի վարձակալում (մրցույթային ընթացակարգով)	Տ. Կուզիկյան, Հ. Վալադյան												
1.5	Տեսաշարերի և հոլովակների պատրաստում	Է. Ամիրխանյան												
1.6	Համերգի անցկացման վայրի և ժամի վերաբերյալ տեղեկատվության սփռում	Է. Ամիրխանյան												
1.7	Համերգի իրականացում	Շ. Վարդանյան												
Միջոցառում 2	Հոբելյանական գալա–համերգ													
2.1	Համերգային ծրագրի սինոփսիսի կազմում	Հ. Ղասաբյան												
2.2	Համերգային ստեղծագործական անձնակազմի ընտրություն	Հ. Ղասաբյան												
2.3	Համերգային ծրագրի և սցենարի կազմում և հաստատում	Հ. Ղասաբյան, Շ Վարդանյան												
2.4	Կատարողական անձնակազմի ընտրություն	Հ. Ղասաբյան												
2.5	Համերգային տեխնիկայի նախագծում	Հ. Ղասաբյան												
2.6	Համերգային տեխնիկայի վարձակալում (մրցույթային ընթացակարգով)	Հ. Ղասաբյան, Հ. Վալադյան												
2.7	Հայկական ռադիոյի 100-ամյա գործունեության պատմությանը վերաբերող տեսաշարերի և հոլովակների պատրաստում	Է. Ամիրխանյան												
2.8	Համերգի իրականացում	Հ. Ղասաբյան												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Հաշվի առնելով, որ ծրագիրը նվիրված է **Հայկական ռադիոյի 100-ամյա հոբելյանին**, շահառուների և շահագրգիռ կողմերի շրջանակը բավականին լայն է՝ սկսած ռադիոլսողից մինչև պետական մարմիններ:

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը
1. Ուղղակի շահառուներ

- **ՀՀ բնակչություն.** Հայաստանում ապրող ՀՀ քաղաքացիները՝ ռադիոլսարանը, որը հնարավորություն կստանա հաղորդակից դառնալ բարձրորակ հոբելյանական բովանդակությանը, պատմական բացառիկ արխիվներին և մշակութային նոր նախագծերին:
- **«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ անձնակազմ.** Շուրջ 300 մասնագետներ (լրագրողներ, պրոդյուսերներ, տեխնիկական և ստեղծագործական անձնակազմ), ովքեր ծրագրի շնորհիվ ձեռք կբերեն մասշտաբային միջոցառումների կառավարման նոր փորձ, կաշխատեն արդիականացված միջավայրում և կիրացնեն իրենց ստեղծագործական պոտենցիալը:

- **Մշակույթի և արվեստի գործիչներ.** Բազմաթիվ արտիստներ, երաժիշտներ, և ոլորտային մասնագետներ, ովքեր անմիջականորեն կներգրավվեն համերգային ծրագրերում, ֆիլմի նկարահանումներում և մեդիա կոնֆերանսում:

2. Անուղղակի շահառուներ

- **Զբոսաշրջիկներ և քաղաքի հյուրեր.**, Այս համերգային ծրագրերը կդառնան նոր մշակութային կետեր քաղաքի քարտեզի վրա՝ հետաքրքրություն առաջացնելով հայկական ռադիո-պատմության հանդեպ:
- **Մեդիա ոլորտի մասնագետներ և ուսանողներ.** Երիտասարդ լրագրողներ և մեդիա-մենեջերներ, ովքեր ծրագրի կրթական, համերգային, հաղորդաշարերի և մեդիա կոնֆերանսի միջոցով կծանոթանան Հանրային ռադիոյի հնարավորությունների և ոլորտի զարգացման միջազգային միտումներին:

3. Շահագրգիռ կողմեր (Stakeholders)

- **ՀՀ Կառավարություն (ի դեմս ԲՏԱ և ԿԳՄՍ նախարարությունների).** Որպես պետական քաղաքականություն իրականացնող մարմիններ, որոնց համար ծրագիրը նպաստում է ազգային արժեքների պահպանմանը և թվայնացմանը:
- **Հանրային հեռարձակողի խորհուրդ.** Որպես հանրային ռադիոընկերության կառավարման մարմին:
- **Միջազգային մեդիա գործընկերներ (EBU և այլն).** Եվրոպական հեռարձակողների միության անդամ-երկրները, որոնց հետ բովանդակության փոխանակումը կիրականացվի **EBU Content Exchange** հարթակի միջոցով՝ բարձրացնելով Հանրային ռադիոյի միջազգային վարկանիշը:

Ռիսկերի գնահատում

Ռիսկի տեսակը	Նկարագրություն	Ազդեցություն	Մեղմման/կանխարգելման գործողություններ
Ֆինանսական	Գնաճի պատճառով ծառայությունների թանկացում կամ չնախատեսված լրացուցիչ ծախսեր:	**Բարձր**	Գնումների գործընթացի վաղ մեկնարկ և ֆիքսված գնով պայմանագրերի կնքում:
Լոգիստիկ և համերգային	Եղանակային պայմանների ազդեցություն բացօթյա միջոցառումների վրա, հրավիրյալ արտիստների կամ հյուրերի հնարավոր բացակայություն:	**Բարձր**	Բացօթյա միջոցառումների համար պահեստային փակ տարածքների նախատեսում: Արտասահմանյան հյուրերի տոմսերի և վիզաների վաղաժամ ձևակերպում և փոխարինող թեկնածուների առկայություն:
Ժամկետների խախտում	Հոբելյանական միջոցառումների ուշացում (հատկապես ֆիքսված ամսաթվերով միջոցառումների դեպքում):	**Բարձր**	Gantt chart-ի կիրառում, ամենշաբաթյա մոնիթորինգ և յուրաքանչյուր միջոցառման համար առանձին պատասխանատու թիմի նշանակում (Task-force):
Տեխնիկական և արխիվային	Համերգային տեսաշարերի համար անհրաժեշտ արխիվային նյութերի վնասված լինելը կամ թվայնացման բարդությունները, բացակայությունը կամ անհասանելիությունը	**Միջին**	Ռադիոյի «Ոսկե ֆոնդի» մասնագետների վաղաժամ ներգրավում նյութերի ընտրության փուլում, ժամանակակից վերականգնողական տեխնոլոգիաների կիրառում:
Հեղինակային իրավունքների (IP) ռիսկ	«Ոսկե ֆոնդի» արխիվային ձայնագրությունների, երաժշտության կամ սցենարների օգտագործումը, որոնց հեղինակային իրավունքները պատկանում են ժառանգներին կամ այլ կողմերի:	**Միջին**	Իրավաբանական թիմի կողմից բոլոր օգտագործվող նյութերի «զտում» (Copyright Clearance): Ժառանգների հետ նախնական համաձայնագրերի կնքում և հեղինակային իրավունքների պաշտպանության կազմակերպությունների (օր.՝ ՀԱՅՀԵՂԻՆԱԿ) հետ համագործակցություն:

Բովանդակային արդիականության ռիսկ	Պատմական/արխիվային նյութերի հիման վրա ստեղծված բովանդակությունը կարող է ընկալվել որպես «ժամանակավրեպ» կամ չհետաքրքրել երիտասարդ լսարանին:	**Միջին**	Ստեղծագործական խմբում թե՛ վետերան ռադիոժուռնալիստների, թե՛ երիտասարդ պրոդյուսերների ներգրավում: Արխիվային նյութերի մատուցում ժամանակակից մուլտիմեդիա լուծումներով (փոդքասթներ, թրեյլերներ, ինտերակտիվ ձևաչափեր):
Կազմակերպչական	Գործընկերների (միջազգային կազմակերպություններ, կապալառուներ) կողմից պարտավորությունների թերի կատարում:	**Միջին**	Հստակ պատասխանատվության մեխանիզմներ նախատեսող պայմանագրերի կնքում և մշտական հաղորդակցություն գործընկերների հետ:

Ռիսկերի կառավարման ռազմավարություն

1. **Մոնիթորինգ և հաշվետվողականություն.** Ծրագրի ողջ ընթացքում իրականացվելու է շաբաթական հաշվետվողականություն: Յուրաքանչյուր շեղում արձանագրվելու է և քննարկվելու է ֆինանսական և կազմակերպչական թիմերի հետ՝ վաղ փուլում լուծում տալու համար:
2. **Արտակարգ իրավիճակների պլան (Contingency Plan).** Խոշոր միջոցառումների համար (օրինակ՝ Գալա-համերգ) մշակվելու է «Պլան Բ»:
    - *Տարածքի ռիսկ.* Եթե հիմնական վայրում առաջանա անհաղթահարելի խնդիր, նախատեսվում է միջոցառումը օրինակ տեղափոխել այլ դահլիճ (որպես այլընտրանք), հոսանքի անջատման դեպքում գործարկել պահուստային գեներատորը և այլն:
    - *Ֆինանսական կառավարում.* «Պլան Բ»-ն չի նշանակում կրկնակի ծախս (օրինակ՝ երկու դահլիճի վարձակալություն), այլ ենթադրում է **ռեսուրսների արագ վերաբաշխում** և պայմանագրային ճկունություն (նախատեսելով կետեր պայմանագրերում ֆորսմաժորային տեղափոխությունների մասին):

Ծրագրի աշխատակազմը

Ստորև բերված է սույն դրամաշնորհային ծրագրում ներգրավվող աշխատակիցների ցանկը.

1.	*Արմեն Քոլոյան*	*Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ գործադիր տնօրեն*
2.	*Էդգար Ամիրխանյան*	*Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ մուլտիմեդիայի բաժնի ղեկավար, ծրագրի համակարգող*
3.	*Հակոբ Ղասաբյան*	*Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ գործադիր պրոդյուսեր, կազմակերպչական հարցերի պատասխանատու*
4.	*Երվանդ Պողոսյան*	*Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ գործադիր տնօրենի տեղակալ – ֆինանսական տնօրեն, գնումների և հաշվառման կազմակերպման պատասխանատու*

Կից ներկայացված են ծրագրի աշխատակազմի ինքնակենսագրականները:

««Հանրային ռադիոյի հիմնադրման 100-ամյակի» միջոցառումների իրականացում (փուլ 1)» դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
Հապավումը (եթե առկա է)	
Ծրագրի անվանումը	Հայկական ռադիոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների իրականացում
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.12.2026թ
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 ՀՀ մարզեր և համայնքներ
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Գործադիր տնօրեն Ա Քոլոյան, Հեռ: +37410570970 Էլ փոստ: info@armradio.am
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Հեռ: +37410570970 Էլ փոստ: info@armradio.am
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ. փոստ)	Ք.Երևան, Ալեք Մանուկյան 5 Հեռ: +37410570970 էլ փոստ: info@armradio.am
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	ՀՀ դրամ

Համառոտագիր

Հայկական ռադիոյի 100-ամյակը պարզապես գերատեսչական հոբելյան չէ, այն Հայաստանի երրորդ հանրապետության մշակութային, քաղաքական և հասարակական կյանքի մեկդարյա տարեգրության արժևորումն է: 1926 թվականից ի վեր ռադիոն եղել է Հայաստանի «ձայնը»՝ կամուրջ հանդիսանալով հայրենիքի և սփյուռքի միջև, պահպանելով մեր լեզվի մաքրությունը և ձևավորելով հանրային կարծիք: Այս ծրագրի կարևորությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս վերագնահատել այն հսկայական ձայնադարանը և մշակութային ժառանգությունը, որը կուտակվել է մեկ դար շարունակ:

Հոբելյանական միջոցառումների շարքը նպատակ ունի ոչ միայն հայացք նետել անցյալին, այլև սահմանել ռադիոյի դերը թվային դարաշրջանում: Այսօր, երբ տեղեկատվական հոսքերն անվերահսկելի են, Հանրային ռադիոն մնում է որպես հավաստիության և որակյալ բովանդակության բացառիկ հարթակ: 100-ամյակի նշումը կխթանի ազգային ինքնության ամրապնդմանը, կվերահմաստավորի ռադիոյի նշանակությունը և նոր շունչ կհաղորդի ռադիոյի ու լսարանի անմիջական կապին: Սա պետական նշանակության իրադարձություն է, որն ընդգծում է Հայաստանի հավատարմությունը իր մշակութային արժեքներին և պատրաստակամությունը՝ քայլելու տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ:

Ծրագրի նկարագրությունը

«Հանրային ռադիոյի 100-ամյակ» ծրագիրն իրականացվելու է 2026 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում և բաղկացած է **16 հիմնական միջոցառումներից**, որոնք միավորված են չորս ռազմավարական ուղղություններում: Նախագծի բոլոր փուլերն ուղղված են Հայկական ռադիոյի դերի, նշանակության արժևորմանն ու հանրային իրազեկվածության բարձրացմանը:

1. Վիզուալ հաղորդակցություն և հանրային ներկայություն (3 միջոցառում). Ծրագիրը մեկնարկում է հոբելյանական բրենդինգի մշակմամբ, որը կապահովի բոլոր 16 միջոցառումների տեսողական միասնականությունը: Հանրության հետ անմիջական կապ ստեղծելու նպատակով Երևանի կենտրոնում կգործի ինտերակտիվ տաղավար (Pop-up Studio)՝ ներգրավելով անցորդներին ռադիոարտադրության գործընթացում:

2. Մշակութային և ապակենտրոնացված միջոցառումներ (8 միջոցառում). Սա ծրագրի ամենածավալուն բաղադրիչն է, որը ներառում է «Ռադիոն մարզերում» համերգաշարը (8 համերգ՝ Բերդից մինչև Քաջարան): Օգտագործվելու է ռադիոյի սեփական երաժշտական կոլեկտիվների (Էստրադային-սիմֆոնիկ նվագախումբ, «Արամ Մերանգուլյան» ժողգործիքների վաստակավոր անսամբլ, «Սայաթ-Նովա» անսամբլ, «Արևիկ» և այլն) ներուժը: Երևանյան միջոցառումները կներառեն բացօթյա համերգներ Ռադիոտան բակում և Կասկադ համալիրում, իսկ տարին կամփոփվի հոբելյանական գալա-համերգով Օպերային թատրոնում:

3. Միջազգային համագործակցություն և գիտակրթական նախագծեր (2 միջոցառում). Նախատեսվում է միջազգային մեդիակոնֆերանս և EBU-ի հետ համատեղ բովանդակության թողարկում, ինչը կբարձրացնի հայկական ռադիոյի տեսանելիությունը և իմիջը միջազգային հարթակներում:

4. Մնայուն արժեքների ստեղծում և ենթակառուցվածքների թարմացում (3 միջոցառում). Ծրագրի շրջանակներում կստեղծվեն վավերագրական ֆիլմ, հոբելյանական նամականիշ և հուշամեդալ, ինչպես նաև նոր ռադիոթատրոն: Որպես ծրագրի տեսանելի և երկարաժամկետ արդյունք՝ կիրականացվի Ռադիոտան շենքի **գեղարվեստական-դեկորատիվ լուսավորության և ֆասադի արտաքին թարմացման** նախագիծը, ինչը կդառնա Երևանի մշակութային դիմագծի նոր տարրը:

Կազմակերպության փորձառությունը

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ն ունի մասշտաբային միջոցառումների պլանավորման, կազմակերպման և տեխնիկական սպասարկման բազմամյա փորձ: Մեր փորձառությունը ներառում է.

1. Մասշտաբային համերգային և հոբելյանական միջոցառումների կազմակերպում Վերջին տարիներին Հանրային ռադիոն, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Հանրային հեռուստաընկերության հետ համագործակցությամբ, Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում և «Արամ Խաչատրյան» համերգասրահում իրականացրել է մի շարք խոշորածավալ նախագծեր, այդ թվում՝

- **ՀՀ ժողովրդական արտիստների հոբելյանական հանդիսություններ.** Երվանդ Երզնկյանի 75-ամյակի, Ռուբեն Մաթևոսյանի 80-ամյակի, Մարտին Վարդազարյանի 85-ամյակի և Ռաիսա Մկրտչյանի 80-ամյակի հանդիսավոր երեկոների ամբողջական կազմակերպում և իրականացում:
- **Համազգային նշանակության հոբելյաններ.** Հովհաննես Բադալյանի 100-ամյակին նվիրված «Ես իմ անուշ Հայաստանի» հոբելյանական համերգի և «Կոմիտաս 150. հետգրություն» նորարարական համերգ-ռադիոհաղորդման պրոդյուսինգը:
- **Հոբելյանական միջոցառումներ.** Հանրային ռադիոյի 95-ամյակի մասշտաբային միջոցառումների շարքը:

2. Երաժշտական արտադրություն և անթոլոգիաների թողարկում. Ընկերությունն ունի ձայնագրման և հրատարակչական բարդ նախագծերի կառավարման փորձ: Նշանակալի ձեռքբերում է մեծանուն դիրիժոր **Օհան Դուրյանի 100-ամյակի** կապակցությամբ թողարկված բացառիկ երաժշտական անթոլոգիան (8 սկավառակ, 10 ժամ տևողությամբ երաժշտական ժառանգություն), որն իր ծավալով աննախադեպ է հայկական շուկայում:

3. Մշակութային միավորների և ռեսուրսների կառավարում. Հանրային ռադիոյի կազմում գործում են 4 պրոֆեսիոնալ երաժշտական կոլեկտիվներ (այդ թվում՝ Էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը, Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլը, «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը և Արևիկ մանկապատանեկան անսամբլը), ինչը թույլ է տալիս ինքնուրույն ապահովել միջոցառումների գեղարվեստական բարձր որակը և բովանդակությունը:

Հանրային ռադիոյի կազմակերպչական թիմը բաղկացած է փորձառու պրոդյուսերներից, մենեջերներից և տեխնիկական մասնագետներից, ովքեր ապահովում են միջոցառումների կառավարումը՝ բյուջետավորումից և լոգիստիկայից մինչև վերջնական արտադրություն:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

1. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է բարձր մակարդակով և հավուր պատշաճի նշել Հայկական ռադիոյի 100-ամյա հոբելյանը՝ վերահիմաստավորելով ռադիոյի դերը որպես ազգային ռազմավարական արժեք, արդիականացնելով դրա ընկալումը երիտասարդության շրջանում և ամրապնդելով միջազգային մեդիա-գործակցությունը:

---

2. Ծրագրի խնդիրները

1. **Բրենդավորում և հաղորդակցություն.** Ծրագրի առաջնային խնդիրն է մշակել հոբելյանական տարվա միասնական տեսողական ինքնություն (branding) և իրականացնել լայնածավալ մեդիա-արշավ՝ ռադիոյի պատմական և ժամանակակից դերը լուսաբանելու և կարևորելու համար:
2. **Ապակենտրոնացում և հասանելիություն.** Կազմակերպել համերգային միջոցառումներ ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլ ապակենտրոնացնել դրանք՝ գնալով ՀՀ մարզեր՝ ապահովելով մշակութային բովանդակության հասանելիությունը մայրաքաղաքից դուրս:
3. **Սերնդափոխություն և կրթություն.** Ներդնել ինտերակտիվ կրթական նախագծեր (մրցույթներ, վարպետության դասեր), որոնք կխթանեն երիտասարդների հետաքրքրությունը մեդիա-արտադրության և ռադիոժուռնալիստիկայի հանդեպ:
4. **Բովանդակային ժառանգության ստեղծում.** Ստեղծել մնայուն մուլտիմեդիա արժեքներ (ֆիլմ, ռադիոբեմադրություն և այլն), որոնք կփաստագրեն ռադիոյի 100-ամյա ուղին:

---

3. Ակնկալվող արդյունքներ

- **Իրազեկվածության բարձրացում.** Հանրային ռադիոյի հոբելյանական նախագծերի և թվային հարթակների տեսանելիության և հանրային արձագանքի զգալի աճ (հիմնված սոցցանցերի ներգրավվածության և մեդիա-մոնիտորինգի վրա):
- **Մասնակցային միջավայր.** Մայրաքաղաքում և մարզերում իրականացված միջոցառումներին հազարավոր քաղաքացիների անմիջական և առցանց մասնակցություն:
- **Միջազգային համագործակցություն.** EBU-ի և այլ միջազգային գործընկերների հարթակներում հայկական ռադիոմշակույթի մասին բովանդակության (ռադիոհաղորդումներ, տեսանյութեր) տեղադրում և փոխանակում:

- **Մշակութային ներկայություն.** Ռադիոտան շենքի արտաքին տեսքի բարելավում/լուսավորում (որպես քաղաքային մշակութային միջավայրի տարր) և հոբելյանական խորհրդանիշների (նամականիշ, հուշամեդալ) թողարկում:
- **Մնայուն արտադրանք.** Պատրաստված և հանրությանը ներկայացված 1 վավերագրական ֆիլմ, 1 նոր ռադիոբեմադրություն և թարմացված շենքի արտաքին լուսավորություն, գովազդային վահանակ և բազմաթիվ արխիվային համերգային ծրագրեր, հոբելյանական նամականիշ և հուշամեդալ և այլն:

Գործողություններ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու
Միջոցառում 1	Հայաստանի հանրային ռադիոյի լոգո և բրենդավորում	
1.1	ՀՌ նոր լոգոյի և 100 ամյակի լոգոյի կոնցեպտի և դիզայնի մշակում	Է. Ամիրխանյան
1.2	Բրենդբուքի (ֆիրմային ոճի ուղեցույցի) ստեղծում	Է. Ամիրխանյան
1.3	Թվային և տպագիր նյութերի ձևանմուշների (template) մշակում	Է. Ամիրխանյան
1.4	Լոգոյի անիմացիա և տեսաշարերի տարրեր ստեղծում	Է. Ամիրխանյան, Ն. Չորեքչյան
Միջոցառում 2	Հոբելյանական հուշանվերների թողարկում	
2.1	Դիզայն և համակարգչային մշակում	Մ. Նիկողոսյան
2.2	Բուկլետի հայերեն, տեքստի սցենար և խմբագրում	Մ. Նիկողոսյան, Կ. Գևորգյան
2.3	Բուկլետի տեքստի թարգմանություն (անգլերեն, ռուսերեն)	Մ. Նիկողոսյան
2.4	Հուշանվերների մրցույթային ձեռքբերում, համապատասխան դիզայնով և լոգոներով	Մ. Նիկողոսյան, Ա Եղիազարյան, Է Ամիրխանյան, Հ. Վալադյան
2.5	Բուկլետների տպագրություն	Մ. Նիկողոսյան, Ա Եղիազարյան, Է Ամիրխանյան, Հ. Վալադյան
Միջոցառում 3	Հոբելյանական նամականիշի թողարկում	
3.1	Հայփոստի կողմից տրամադրված հոբելյանական նամականիշի ուղեկցող բացիկի ու ծրարի տպագրություն	Է. Ամիրխանյան
Միջոցառում 4	Հոբելյանական հուշամեդալի թողարկում	
4.1	Հոբլյանական հուշամեդալի պատրաստում	Է. Ամիրխանյան
Միջոցառում 5	Բացման հանդիսավոր արարողություն	
5.1	Համերգային ծրագրի և սցենարի կազմում	Շ. Վարդանյան
5.2	Հանրային ռադիոյի մուտքի և ներքին բակի տոնական ձևավորման դիզայն	Շ. Վարդանյան
5.3	Հնչյունային ու լուսային տեխնիկայի, բեմի կահավորման և տեսաէկրանների նախագծի կազմում	Շ. Վարդանյան, Տ. Կուզիկյան
5.4	Հնչյունային ու լուսային տեխնիկայի, բեմի կահավորման և տեսաէկրանների վարձակալության գնման գրոծընթաց	Շ. Վարդանյան, Հ. Վալադյան
5.5	Տեսաշարերի պատրաստում	Շ. Վարդանյան
5.6	Համերգի իրականացում	Շ. Վարդանյան
5.7	Հյուրասիրության կազմակերպում	Շ. Վարդանյան
Միջոցառում 6	Համերգաշար մարզերում	

6.1	Համերգային ծրագրի կազմում և հաստատում 8 համերգների համար,	Շ. Վարդանյան, Թ. Պողոսյան, Ե. Երզնկյան, Ա.Պետրոսյան, Վ. Հայրապետյան
6.2	Համերգային տեխնիկայի նախագծում	Շ. Վարդանյան, Տ. Կուզիկյան, Ա. Խաչատրյան
6.3	Համերգային տեխնիկայի վարձակում (մրցույթային ընթացակարգով)	Շ. Վարդանյան, Տ. Կուզիկյան, Ա. Խաչատրյան, Հ. Վալադյան
6.4	Համերգների առաջխաղացման և իրազեկման նյութերի նախագծում	Դ. Փարթամյան
6.5	Կազմակերպչական աշխատանքներ (տեղական ինքնակառավարման մարմիններ հետ համագործակցություն, համույթների տեղափոխման ապահովում, միջոցառումների ժամանակացույցի պահպանման վերահսկում, փաստավավերագրական նյութերի և լրատվական ռեպորտաժների պատրաստում)	Շ. Վարդանյան, Ն. Չորեքչյան, Ա. Ղազանչյան
6.6	Համերգի իրականացում նախապես հաստատված համայնքներում	Շ. Վարդանյան, Թ. Պողոսյան, Ե. Երզնկյան, Ռ. Մաթևոսյան, Վ. Հայրապետյան
Միջոցառում 7	Փաստավավերագրական ֆիլմի արտադրություն	
7.1	Պատմական փաստերի հավաքագրում, ժամանակագրական և թեմատիկ խմբավորում	Հ. Ղասաբյան
7.2	Մամուլի հրապարակումների և ռադիոձայնագրությունների ուսումնասիրություն և թեմատիկ նյութերի հավաքագրում	Հ. Ղասաբյան
7.3	Տեսա և կինոնյութերի ուսումնասիրություն, կոդավորում և խմբավորում	Հ. Ղասաբյան
7.4	Լուսանկարների և արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն, ժամանակագրական և թեմատիկ խմբավորում	Հ. Ղասաբյան
7.5	Հավաքված բոլոր փաստերի և նյութերի խմբավորում և փաթեթավորում	Հ. Ղասաբյան
7.6	Ֆիլմի արտադրություն	Հ. Ղասաբյան
7.7	Ֆիլմի պրեզենտացիա	Հ. Ղասաբյան
7.8	Միջոցառման համակարգում և վերահսկողություն	Հ. Ղասաբյան
Միջոցառում 8	ԵՀՄ (EBU) ցանցում հեռարձակման համար ռադիոհաղորդման թողարկում	
8.1	Սցենարի մշակում	Հ. Ղասաբյան
8.2	Ռադիոհաղորդման պատրաստում հայերեն	Հ. Ղասաբյան
8.3	Սցենարի թարմանում 4 լեզվով	Հ. Ղասաբյան
8.4	Ռադիոհաղորդման պատրաստում օտար լեզուներով	Հ. Ղասաբյան
8.5	Նախագծի վերհսկման աշխատանքներ	Հ. Ղասաբյան
Միջոցառում 9	100-ամյակին նվիրված միջազգային մեդիակոնֆերանս	
9.1	Երկօրյա մեդիակոնֆերանսի իրականացում	Մ. Նիկողոսյան
9.2	Հյուրերի դիմավորում և տեղավորում, ավարտին նաև ճանապարհում	Մ. Նիկողոսյան
9.3	Հյուրերի սննդի և ժամանցի կազմակերպում	Մ. Նիկողոսյան
Միջոցառում 10	Ռադիոինտերակտիվ տաղավարի ստեղծում և գործարկում	
10.1	Ռադիոինտերակտիվ տաղավարի դիզայն, նախագծում	Վ. Անդրիասյան
10.2	Ռադիոինտերակտիվ տաղավարի կառուցում և մոնտաժ	Վ. Անդրիասյան
10.3	Ռադիոինտերակտիվ տաղավարի կահավորում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Վ. Անդրիասյան
10.4	Իմիջային տեսանյութերի պատրաստում	Վ. Անդրիասյան

Արմեն Քոլոյան

Հեռախոս՝ 043085086
Էլեկտրոնային հասցե՝ a.koloyan@armradio.am

Ծնվել եմ 28/03/1957

Աշխատանքային փորձ՝
Ղազարոս Աղայանի անվան դպրոց, հոգեբան, լոգոպեդ, 1980-82

«Կոմսոմոլեց» թերթ, սրբագրիչ, թղթակից, 1982-85

ՀԽՍՀ Ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտե, գիտահանրամատչելի հաղորդումների խմբագրություն, ռեժիսորի ասիստենտ, ռեժիսոր 1985-89

ՀՅԴ Մամուլի և տեղեկատվության կենտրոնի թղթակից, 1990-1993

«Ազատություն» ռադիոկայանի թղթակից, 1993-2024

Հանրային ռադիոյի տնօրեն, 2024 առ այսօր

Կրթություն՝
Ավարտել եմ Նելսոն Ստեփանյանի անվան համար 71 դպրոցը, 1974

Մոսկվայի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտ, մանկական հոգեբանություն, դեֆեկտոլոգիա, լոգոպեդիա, 1974-1979

europass

Edgar Amirkhanyan

Date of birth: 26/05/1987 | **Nationality:** Armenian | **Phone number:** (+374) 99798982 (Mobile) | **Email address:** edgar.amirkhanyan@eiu.am | **Website:** www.eiu.am | **Whatsapp Messenger:** +37499798982 |

Address: Yerevan, 10 st. 1 nail Noragavit 12/1, 0072, Yerevan, Armenia (Home)

WORK EXPERIENCE

VICE-RECTOR FOR STRATEGIC DEVELOPMENT AND EXTERNAL RELATIONS – EURASIA INTERNATIONAL UNIVERSITY – 20/11/2024 – Current – YEREVAN, ARMENIA

1. Lead the development and delivery of the University's Internationalisation Strategy.
2. Promote departmental targets for international activity, student recruitment, programme delivery, and external partnerships.
3. Guide the University's engagement with EU initiatives such as CBHE, Erasmus+, and the Bologna Process.
4. Support the development of internationally oriented curricula and joint academic programmes.

HEAD OF PR AND MARKETING – EURASIA INTERNATIONAL UNIVERSITY – 28/02/2021 – 20/11/2024 – YEREVAN, ARMENIA

Responsibilities:

1. Develop, implement, and evaluate an annual marketing and communications plan that includes social media, print and digital content, and email marketing.
2. Work closely with program staff to design and implement communications strategies and effective messaging for organisational and project-specific goals.
3. Assist members of the management team in ensuring our communications are culturally competent and reach diverse audiences.

HEAD OF MULTIMEDIA DEPARTMENT – PUBLIC RADIO OF ARMENIA – 15/04/2016 – Current – YEREVAN, ARMENIA

Responsibilities:

1. Set objectives for the PR team and monitor team performance.
2. Arrange interviews and press releases to promote the company and its products/services.
3. Organise PR events to increase overall awareness of the company.
4. Lead staff training sessions to strengthen departmental skills and ensure high-quality communication outputs.

EDUCATION AND TRAINING

11/07/2021 – 20/07/2021 Warsaw, Poland

GRADUATE SUMMER SCHOOL WEASA - Warsaw Euro-Atlantic Summer Academy / College of Europe in Natolin

Address College of Europe in Natolin Nowoursynowska 84 02-797 Warsaw, Poland, 84 02-797, Warsaw, Poland |

Website https://www.weasa.org/

09/09/2019 – 04/05/2020 Yerevan, Armenia

POLITICAL STUDIES Yerevan School of Political Studies of the Council of Europe (YSPS)

Address "Tashir" Centre, 6th floor, room 31 Khorenatsy street 33, 0018, Yerevan, Armenia |

Website https://www.schoolsofpoliticalstudies.eu/index.php/en/network-of-the-schools/armenia

29/06/2019 – 29/07/2019 Yerevan, Armenia

MARKETING AND COMMUNICATIONS London business academy

Address Moskovyan 24/1 0002 Yerevan, Armenia, 0002, Yerevan, Armenia | **Website** https://lba.am/

17/05/2018 – 17/06/2018 Berlin , Germany

MARKETING AND PR IBMI - International Business Management Institute

Address Friedrichstr. 246 10969 Berlin, Germany, 10969, Berlin , Germany | **Website** https://www.ibm-institute.com/

09/09/2020 – 15/10/2021 Yerevan, Armenia

THE MASTER OF BUSINESS ADMINISTRATION (MBA) Russian-Armenian University (RAU)

Address 123 Hovsep Emin street,Yerevan, 0051 Armenia, RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY, 0051, Yerevan, Armenia |

Website https://rau.am/en

01/09/2007 – 09/06/2011 Yerevan, Armenia

ARMENIAN LANGUAGE AND LITERATURE Yerevan State University

Address Republic of Armenia, Yerevan, 0025, 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Armenia | **Website** http://www.ysu.am/main/

CREATIVE WORKS

Trainings and Professional Activities

1. **Trainer for EU and USAID-funded Projects** — People in Need, HEBA NGO, “Agate” Rights Defense Center
2. Delivered capacity-building trainings and development workshops aimed at strengthening beneficiaries’ skills, supporting effective project implementation, and ensuring alignment with EU and USAID standards.
3. Individual Member of the World Communications Forum Association (Davos, Switzerland)
4. Journalism lecturer - Eurasia International University, University of Teramo, Santiago de Compostela and more EU univserities.

LANGUAGE SKILLS

Mother tongue(s): **ARMENIAN**

Other language(s):

	UNDERSTANDING		SPEAKING		WRITING
	Listening	Reading	Spoken production	Spoken interaction	
ENGLISH	C1	C1	B2	B2	B2
RUSSIAN	C1	C1	C1	C1	C1

Levels: A1 and A2: Basic user; B1 and B2: Independent user; C1 and C2: Proficient user

SKILLS

Social Media | Video editing | Text Editing | Teching | Microsoft Office | Organizing events | Graphic design | Photo, video

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Ղասաբյան

Լրագրող, սցենարի հեղինակ, պրոդյուսեր

Ծննդյան վայր և թվական՝ Երևան, Դեկտեմբերի 21, 1967 թ.

Կրթություն՝ 1984 -1991թթ., Երևանի Պետական Համալսարան, հայկական բանասիրական ֆակուլտետ, ժուռնալիստիկայի բաժին

Ծառայություն բանակում՝ 1986-88 թթ.

Լեզուներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն

<u>Եթերային և լրագրողական գործունեությունը՝ 1991 թվականից</u>

Հայաստանի հեռուստառադիոյի պետական կոմիտե, Հայաստանի ազգային հեռուստատեսություն, ‘Արմենիա’, ‘Պրոմեթևս’, ‘Շանթ’ հեռուստաընկերություններ

1991-1995 թթ. ‘‘Գործ’ տնտեսական վերլուծական ծրագրի հեղինակ և վարող (Հայաստանի Հեռուստառադիոպետկոմ՝ ուղիղ եթեր)

1993-1995 թթ. ‘‘Հայաստան’ հեռուստաընկերության ծրագրերի տնօրեն

1995-1997 թթ. ‘‘Շարմ’ հոլդինգի հեռուստատեսային տնօրեն

1997-1998 թթ. ‘‘Դեսից-դենից’ թոք-շոուի հեղինակ և վարող (Հայաստանի Ազգային Հեռուստատեսություն)

1998թ. ‘‘Լրաբեր’ լրատվական ծառայության փոխտնօրեն (Հայաստանի Ազգային Հեռուստատեսություն)

1999 թ. ‘‘Այսօր’ քաղաքական թոք-շոուի հեղինակ և վարող (Հայաստանի Ազգային Հեռուստատեսություն՝ ուղիղ եթեր)

2000-2002 թթ. ‘‘Երեկոն Հակոբ Ռուբինյանի հետ’ թոք-շոուի հեղինակ և վարող (‘Արմենիա’ հեռուստաընկերություն)

2002-2006 թթ. ‘‘Գլոբ Նյուզ’ լրատվական, վերլուծական գործակալության տնօրեն

2006-2010 թթ. ‘‘Ժողովրդական Երգիչ’ և ‘Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր’ ծրագրերի պրոդյուսեր և վարող (‘Շանթ’ հեռուստաընկերություն)

2010-2023 թթ.՝ գործունեություն ԱՄՆ-ում՝ ‘USArmenia’, ‘AMGA’ և ‘ARTN’ հայկական հեռուստաընկերություններում

<u>Սցենարի հեղինակ.</u>

‘Քանի դեռ կամ’ գեղարվեստական ֆիլմ

‘Մեր Այբբենարանը’ մանկական ֆիլմաշար 8 մասից

‘Մի լուսանկարի պատմություն’ վավերագրական ֆիլմ

‘Էմիգրանտներ’ սերիալ (149 սերիա, ԱՄՆ)

‘Անմեղ մեղավորները’ գեղարվեստական ֆիլմ (ԱՄՆ)

‘Կյանքի գինը’ սերիալ (3-րդ եթերաշրջան, 50 սերիա, ԱՄՆ)

‘Սիրո կամուրջ’ մյուզիքլ

‘Ինձ հոգեբան պետք չէ’ պիես (ԱՄՆ)

‘Ազնիվ ստախոսները’ պիես (ԱՄՆ)

‘Ես գիտեմ, որ դու գիտես’ պիես (ԱՄՆ)

Երգերի բառերի հեղինակ (բոլորը գրացված են ‘Հայհեղինակ’ ընկերությունում)

1994 թվականից՝ Հայաստանի Ժուռնալիստների Միության անդամ

1998 թվականից՝ Ժուռնալիստների Միջազգային Ֆեդերացիայի անդամ

2016 թվականից՝ ԱՄՆ հեղինակների գիլդիայի անդամ

Այսօր՝ Հայաստանի հանրային ռադիոյի գործադիր պրոդյուսեր

Ինքնակենսագրական

Երվանդ Պողոսյան

Ադոնց 6, բն 207, Երևան
Հեռ.՝ +374 77 009889
+374 43 009889

Էլփոստ՝ yervandx@gmail.com

Կրթություն	
2000-2002	Երևանի պետական համալսարան, Տնտեսագիտության ֆակուլտետ, Տնտեսության մաթեմաթիկական մոդելավորում, Մագիստրատուրա
1996-2000	Երևանի պետական համալսարան, Տնտեսագիտության ֆակուլտետ, Բակալավրիատ
Աշխատանքային փորձ	
Փետրվար.2016-մինչ այժմ	Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ – Ֆինանսական տնօրեն
Մայիս.2015-Հունվար.2016	Աշտարակ–Կաթ ՓԲԸ Ֆինանսական տնօրեն
Սեպտեմբեր.2010-Ապրիլ.2015	Նատֆուդ ՓԲԸ Ֆինանսական տնօրեն
2007-Օգոստոս.2010	Աշտարակ–Կաթ ՓԲԸ Ֆինանսատնտեսագիտական բաժնի ղեկավար
2001-2006	Աշտարակ–Կաթ ՓԲԸ Տնտեսագետ
2002-2006	Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց Աշխարհագրության ուսուցիչ
Օտար լեզուներ	Անգլերեն, Ռուսերեն
Համակարգչային գիտելիքներ	MS Excel (+vba, +analysis toolpak, +solver addin), Access(+vba,+sql), Word , Outlook SPSS 1C7.7:Enterprise, 1C8.2:Management of Production Enterprises, 1C8.3:Management of Enterprises, Armenian Software, SoftMaster, SmartSale
Ծննդյան ամսաթիվ	25.09.1979